ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳՐԵՐԸ ՀՕԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

Գրող, պետական և հասարակական գործիչ Կարեն Միքայելյանը (1883—1942) Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ-ի) և Կարմիր խաչի պատվիրակության կազմում 1925—1927 թթ. ճանապարհորդել է Եվրոպայում և Ամերիկայում։ Պատվիրակությունը նպատակ ուներ սերտ կապեր հաստատել հայկական գաղթօջախների հետ։ Զեկուցագրերում Կ. Միքայելյանը նկարագրում է արտասահմանյան հայ զանգվածների ջերմ հայրենասիրությունը և համակրանքը Սովետական Հայաստանի նկատմամբ, խոսում է այն դրամական, նյութական ու բարոյական օգնության մասին, որ ցույց է տվել սփյուռքը Սովետական Հայաստանին։ Նյութերը հրապարակվում են որոշ կրճատումներով։ Դրանք պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Կ. Միքայելյանի ֆ., № 794, 795, 819)։

ՎԱՐԱԶԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

26 գեկտ.<եմբերի>, 1925
Փարիզ

1

ՀՕԿ-ի գլխավոր վարչության<ը>

Մեր այս նամակն ուշացավ սաստիկ մեր զբաղված լինելու պատճառով։

Անցյալ ամիս դեկտ.<եմբերի> 15-ին հասանք Փարիզ։ Դիմավորելու համար կայարան էր եկել 40-ից ավելի բազմություն, որոնց մեջը կային տեղիս բոլոր կրթական-հասարակական հիմնարկությունների ներկայացուցիչներ։

Կայարանից տարան պանդոկ, ուր տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն։

Այնուհետև առաջին մեր հանդիպումը հասարակության հետ եղավ ՀՕԿ-ի տեղական ճյուղի հանդիսավոր նիստին, ուր մենք ծանոթացանք ՀՕԿ-ի գործունեության հետ և տվինք մեր հրահանգները նրա ապագա գործունեության համար։

Մի քանի օրից հետո, Շիրվանզադեի նախագահությամբ, ՀՕԿ-ի տեղական վարչությունը պատվեց մեզ ճաշով։

Նույնպիսի հարգանքի ցույց արավ նաև տեղիս Տիկնաց միությունը՝ կազմակերպելով թեյասեղան ի պատիվ մեզ։

Այդ թեյասեղանի առթիվ Բարեգործական միությունը նվիրաբերեց անապատան երեխաների օգտին, «Անապատան երեխաների բարեկամների ընկերությանը» հանձնելու համար 100 ֆունտ ստ., որպիսի գումարը այստեղից Մոսկվա գնացողի միջոցով փոխադրեցինք Մոսկվա, այդտեղից Ձեր միջոցով վերոհիշյալ ընկերությանը վճարելու պայմանով։

Առաջին հանդիպումը հասարակական լայն շրջանների հետ տեղի ունեցավ մի հոթելում, ուր հրավիրված էին տեղիս բոլոր կրթական-բարեգործական հիմնարկությունների վարչության անդամները, թվով 50—60 հոգի։ Այդտեղ, մտերմական բնույթ կրող զեկույցով, մենք տվինք մեր պատվիրակության գալու նպատակները և պատմեցինք Հայաստանի արդի վիճակի և շինարարական աշխատանքների մասին։

Նույն հարցերի մասին, հրապարակական զեկույցով, երևան եկանք Փարիզի գաղութի առաջին, դեկտ.<եմբերի> 4-ին, ուր ներկա էր 400<-ի> չափ բազմություն, և այդ զեկույցը նույն դահլիճում նորից կրկնեցինք դեկտ.<եմբերի> 17-ին։

Դեկ.<տեմբերի> 15-ին, ի պատիվ մեզ մի հրապարակական զեկույց էր կազմակերպել տեղիս Տեխնիկական ընկերությունը «Հայաստանի էլեկտրիֆիկացիայի մասին», որին մասնակցեցինք և մենք։

Դեկտ.<եմբերի> 21-ին տեղիս մեծագույն դահլիճներից մեկում ցուցադրվեց «Խոր.<հրդային> Հայաստան» կինոֆիլմը։ Մի քանի հազար մարդ կար, նույնքան էլ դուրսը մնացին՝ տեղ չլինելու պատճառով։ Ամեն մի պատկերին՝ խանդավառ ծափահարություն, նույնիսկ այնտեղ, ուր գրված էր հայերեն տառերով «Ա մաս»։ Սեանսի վերջում տեղական ընկերության ներկայացուցիչները արին կարևոր հայտարարություններ, որոնց մասին կգրենք առանձին։

Մեր ընդհանուր տպավորությունն այն է, որ գաղութահայության ամենայն խավերը ամենաբարյացակամ վերաբերմունքն ունեն դեպի Խ. Հայաստանը և մեծ հավատով են վերաբերվում նրա շինարարական աշխատանքներին, և որ Հայաստանի հանդեպ գոյություն ունեցող ընդդիմադիր տարրերը կորցնում են իրենց ոտքի տակի հողը և չունեն որևէ հեռանկար, որով կարողանային ժողովրդական մասսաները խանդավառել և կապել իրենց հետ։

Այսքանը մեր ընդհանուր տպավորությունների մասին։

Այնուհետև, բացի պաշտոնական զեկույցներից ու պատվո սեղաններից, մենք ունեցանք բազմաթիվ հանդիպումներ այս ու այն անհատների, խմբակների և հիմնարկությունների հետ, որոնց հետ ունեցած խոսակցություններն ու կնքված համաձայնությունները սիստեմայի վերածելով, հետևյալ պատկերն է ստացվում...

Փաստեր, որ մենք մեկ-մեկ գրի առանք զանազան անձերից։

1. Ճանիճների չորացման համար ուղարկված է 34.000 ռ....

2. Դավալուի ճահճի չորացման համար, Ք. Ե. Կարիկյանի առաջարկով, Տիկնաց բարեգործ.<ական> ընկեր.<ությունը> տվել է մի գումար, որ այնուհետև պ.պ. Պ. Էմերյան և Ա. Համբարձումյան[1], հասցնելով մինչև 600 ոսկիի, ուղարկել են Հայաստան...

3. Դարումի Հակոբյանի անվան մանկաբարձական կլինիկայի համար ուղարկված է 2000 անգլ. ֆ. ստ., մինչև օրս ստացման թուղթ չի եկած։ Չկա տեղեկություն նաև, թե այդ գումարը ինչպե՞ս է գործադրվել։ Մնացած գումարը՝ 5110 անգլ. ֆ. ստ., մինչև օրս մնում է պատրաստ բանկի մեջ, ուղարկելու համար։ Հայաստանը այդ գիտե և չի պահանջում։ 2000 ֆ. ստ. ուղարկված է 1925 թ. մարտի 9-ին։

4. Ե. Աղաթոն բեյը ուղարկել է 50 անգլ. ոսկի, լավագույն գյուղատնտեսական արդյունքների մրցանակաբաշխության համար, սակայն մինչև օրս նրան ոչ մի լուր չի տրված։

5. Գաղթականների ներգաղթի համար օգոստոսի 10-ին ուղարկված է 2000 ֆ. ստ.։ Նույն նպատակով ուղարկված է 3000 ֆ. ստ. հոկտեմբերի 20-ին...

6. Մեխանիկական գործիքներ է ուղարկված հունիսի 11-ին՝ 63 արկղ, հայտնի չէ տեղ է հասել, թե ոչ։

7. Պողոս Նուբար փաշայի նվիրաբերած<ը>, իր կնոջ հիշատակին, որբանոցի համար. հունվարի 4-ին դիմում է եղած ակ. Թամանյանին, որ վերջինս ուղարկի որբանոցի հատակագիծը։ Նույն խնդրի համար երկրորդ անգամ հարցում է եղել հունիսի 4-ին։ Երկու հարցումներն էլ մինչև օրս մնացել են անպատասխան։ Իսկ գումարն այստեղ այդ նպատակի համար արդեն պատրաստ է։ Այդ հարցի մասին նորից գրել է Փիրումյանը[2], հունիսի 25-ին։

8. Մարկոսյան կտակի արհեստագիտական դպրոցի հատակագիծը ուղարկված է Թամանյանին, որ նա հաստատի, որից հետո կարող լինեն կտակակատարները անցնել շինության կառուցման...

9. Գյուղատնտեսական բանկի համար ստացված են գումարներ։ Ը.<նկ.> Արամայիս Երզնկյանը կարգադրել է այդ գումարները ստանալ ժամանակավոր ստացականներով, խոստանալով, որ անմիջապես կուղարկի իսկական արժեթղթերը...

10. Պողոս Նուբար փաշան գյուղատնտեսական ակցիաների համար տրվել է 13.000 ռ., հրաժարվելով նրա տոկոսներից և միևնույն ժամանակ կարգադրելով, որ այդ տոկոսները տրվեն համալսարանին՝ մրցանակների համար։

11. Երուսաղեմից ուղարկված 250 որբի տեղավորման համար բուր չկա, իսկ այդ նպատակի համար բաց է թողնված կառավարությանը 50.000 ռ.։

12. Բաշալյանը[3] ուղարկել է Ար. Երզնկյանի միջոցով համալսարանի համար 400 ֆրանկի դեղորայք։

13. Ա. Զոպանյանը ուղարկել է Մակինցյանի և Պատմագրյանի միջոցով իր բոլոր աշխատասիրությունները՝ Հայաստանի զանազան հիմնարկություններին տալու համար։ Ոչ մեկից—ոչ մի լուր։ Իսկ «Նորքի» հասցեով ուղարկել է Լեոին «Roserie» թանկարժեք աշխատասիրությունը, մինչդեռ Լեոն դրում է, թե չի ստացել։

14. Իսկենդիր Հովսեփը ուղարկել է Պատմագրյանի միջոցով իր արժեքավոր գրադարանը, բաղկացած 800 գրքից—լուր չկա, թե այդ գրքերը տեղ հասա՞ն, թե ոչ։

15. Հովհաննես Խան-Մասեհյանը, թե Մակինցյանի միջոցով և թե անմիջապես Հայաստան է ուղարկել 600 գիրք, 3 անգամով, իր Շեքսպիրի թարգմանություններից՝ փառահեղ կազմած, լուր չկա, թե այդ գրքերը տեղ են հասե՞լ, թե ոչ։

16. Սևանա լճի մեջ եղած ձկների թեփերից կեղծ մարգարիտներ պատրաստելու համար Զատիկ Խանզադյանը 2 անգամ հարցում է արել Ա. Երզնկյանի և Շահվերդյանի միջոցով և ուղարկել մանրամասն տեղեկագիր...

18.* Նկարիչներ Էդգար Շահենի[4] և Փուշման[5] ներկեր են ուղարկել Հայաստանի գեղարվեստական դպրոցի համար և ստանալու պատասխանը ստացել են նկարիչ Սարյանից...

Անցագիրների խնդիր։ Ֆրանսիայում կա 40.000-ի չափ գաղթականություն։ Ճնշող մեծամասնությունը՝ ընչազուրկ, բանվոր։ Նրանք ենթարկվում են ամենաանկարագրելի շահագործության ֆրանսիական ֆաբրիկաներում, գործարաններում ու ֆիրմաներում։ Այդ դեռ բավական չէ, նրանք չեն օգտվում սովորական, մահկանացուի քաղաքացիական իրավական նորմաներից։. Նրանք ոչ մի պետության հպատակ չեն համարվում և ոչ մի պետություն նրանց իր հովանավորության տակ չի վերցնում, լինելով նախկին թուրքահպատակներ, նրանք չեն ճանաչվում թուրք հյուպատոսների կողմից։ Ֆրանսիական կառավարությունը նրանց վերջերս ցուցակագրեց իբրև «թուրքեր, հայկական ծագումով»։ Սակայն այդ հանգամանքն անգամ ազդեցություն չարավ, որ Թուրքիան ընդունի նրանց իբրև իր հպատակների։ Այսպիսով նրանք կախված են օդի մեջ, ենթակա ամեն մի պատեհության...

---

* Ձեկուցում 17-րդ կետը հեղինակի կողմից չնշված է։

Դրանով է բացատրվում այն մեծ ձգտումը, որ ներկայումս գոյություն ունի գաղութահայ լայն մասսաների մեջ դեպի խոր.<հրդային> Հայաստանը, որի վրա նայում են իբրև իրենց միակ հովանավորի վրա...

Վիզաների խնդիրը: Շնորհիվ այն պրոպագանդի, որ մղվում է հօգուտ Հայաստանի, գաղութահայության մեջ ստեղծվում է ռոմանտիկական վերաբերմունք, որից դրդված շատերը ուզում են գալ Հայաստան՝ այս կամ այն կերպ օգտավետ լինելու համար: Դրանք մի քանի տեսակի են բաժանվում.

ա. բանվորներ և արհեստավորներ, որոնք ուզում են ապրել իրենց սոցիալական դրության հարազատ պետության մեջ, այնտեղ աշխատելու և այնտեղ տոկալու համար:

բ. ունեոր մարդիկ, որոնք այս կամ <այն> գումարը ունեն, ուզում են գնալ Հայաստան, հաստատվել այնտեղ և ապրել այնտեղ իր<ենց> համար հարազատ միջավայրի մեջ:

գ. մտավորականներ, որոնք կամ դրդված հայրենասիրությունից և կամ ցանկանալով այնտեղ պաշտոն ստանալ, ուզում են գնալ Հայաստան և այնտեղ աշխատել:

Հոգեբանական այս մոմենտները հաճախ անկեղծ են և ինքնաբուխ և չպիտի անտես առնել...

Շիրակի գյուղացիներ, որոնք պատերազմի ժամանակ փախել են Ամերիկա, այժմ ուզում են վերադառնալ Հայաստան՝ իրենց գյուղը, իրենց ընտանիքի գլուխն անցնելու համար: Ամերիկայից գալիս են Բեռլին, դիմում են վիզայի համար ը.<նկ.>, ը.<նկ.> Բեկզադյանին և Տեր-Գաբրիելյանին և ամիսներով մնում անպատասխան, ծախսելով իրենց խնայած գումարների վերջին մնացորդները...

Վերջին, անցագրի և վիզայի խնդիրների մասին բազմաթիվ դիմումներ են եղել և տեղական հյուպատոսարանին: Այդ նույն խնդիրները հարուցվեցին և այն տեսակցության ժամանակ, որ մենք ունեցանք Ռակովսկու հետ:

Դ. Կտակների և նվիրաբերությունների խնդիր: Այնուհետև, զուգընթացաբար մենք պարապեցինք այդ խնդրով: Դրա համար մենք ունեցանք բազմաթիվ տեսակցություններ և խորհրդակցություններ, երևան հանելու այն բոլոր գումարները, որոնք նվիրաբերված են այս կամ այն հանրօգուտ ձեռնարկությունների համար: Առայժմ ցուցակագրված և ուսումնասիրության են ենթակա մոտ 18 նվիրաբերություն՝ 8 միլ. ռուբլու, որոնք համարյա թե բոլորն էլ կարելի է օգտագործել այժմյան Հայաստանի մեջ, որոնց նկատմամբ և կան կտակակատարների և նվիրատուների տրամադրությունը: Այդ ուղղությամբ, համաձայնեցնելով մեր աշխատանքները ընկ. Փիրումյանի հետ, տանում ենք լուրջ աշխատանք և արդեն մի քանիսի նկատմամբ հանգել ենք դրական որոշման:

Այդ հարցին, հականե անվանե, մենք կվերադառնանք առանձին-առանձին:

Ե. Կազմակերպչական խնդիր. Թե ինչպես պիտի անել, որ ՀԿ-երը արտասահմանում ժողովրդական բնույթ կրեն և չմնան իրենց սահմանա<փակ> կաղապարների մեջ, ինչպես որ այժմս են... Թե ինչպես պիտի լուծենք այս վերջին խնդիրը՝ կգրենք հետագայում:

Նորից հիշեցնում ենք, որ ուղարկեք անմիջապես հրապարակած այն դեկրետը, ուր արտոնություններ են տրվում նոր բնակարաններ և տներ շինող քաղաքացիներին: Այդ դեկրետի մասին այստեղ գաղափար չունեն:

Հայաստանի օգնության կոմիտեի պատվիրակներ՝

Կ. Միքայելյան

Պատճենը՝ ընկ. Լուկաշինին

Հայկենտգործկոմին և Հայժողխորհրդին

<1926>

2
ՀՕԿ-ի գլխավոր վարչության <ը>

Երևան

Հարգելի քաղաքացիներ!

Անցյալ, դեկ.<տեմբերի> 26-ի նամակում գրել էինք, որ մենք վարում ենք մի շարք բանակցություններ այս կամ այն հիմնարկությունների և անձնավորությունների հետ՝ գործադրելու համար Հայաստանում եղած գումարները։

Այդ բանակցությունները մենք վարում ենք այստեղ, Հայաստանի կառավարության ներկայացուցիչ ընկ. Փիրումյանի խորհրդակցությամբ ու արդեն մի քանիսի վերաբերյալ մենք հանգանք վերջնական համաձայնության, որ ստորև մեկ-մեկ առաջ կբերենք։

Գումարների գործադրության հսկողությունը մենք դրինք Ձեր, գլխավոր վարչության վրա, ստանալով նախ որոշ գումարներ ավանսով, որպեսզի վարչությունդ հնարավորություն ունենա պատրաստել տալու անհրաժեշտ նախահաշիվներն ու հատակագծերը։ Մենք այնուհետև մեր պայմանագրերի մեջ մտցնում ենք մի կետ ևս, որպեսզի այդ գումարներից 1—3% հատկացվի վարչությանդ՝ գումարների գործադրման ժամանակ անհրաժեշտ ծախսերը հոգալու համար։

Մենք այդ կետերը դրինք մեր և նվիրատուների հարաբերությունների մեջ բարեխղճությամբ և արագությամբ կատարելու համար։

Քանի որ այդպիսի հանձնարարություններ շատ են լինելու, մենք առանձնապես խնդրում ենք, որ վարչությունդ ստեղծի մի հատուկ շինարարական հանձնախումբ, մտցնելով այդտեղ ոռճիկով մի հմուտ ճարտարապետ, այստեղից եղած բոլոր հանձնարարությունները և դիմումները իսկությամբ, բարեխղճությամբ և արագությամբ կատարելու համար։

Հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել հաշվապահության կանոնավորության վրա, որպեսզի հնարավոր լինի պարբերաբար և հաճախ տեղեկություններ տալու ծախսված գումարների մասին նվիրատուներին և կտակակատարներ<ին>։

Սրանք մեր այստեղի գործունեության և գաղութներին Հայաստանի հետ կապելու հրամայական նախապայմաններն են, որ մենք խնդրում ենք իրագործել ամենայն ճշտությամբ, որովհետև այդ առաջարկները արդյունք են գաղութների տրամադրություններին և հոգեբանությանը բավարարություն տալու ձգտմանը։

Այնուհետև մենք աշխատում ենք բոլոր շինարարական ձեռնարկությունների իրագործումը կապել «Շինարար» ընկերության հետ, ուստի Դուք պիտի առանձին ուշադրություն դարձնեք, որ նա բոլոր հանձնարարությունները, որ պիտի անվեն Ձեր միջոցով, կատարի բարեխղճությամբ և արագությամբ։

Իսկ այդ հանձնարարությունները, ինչպես երևում է եղած տրամադրություններից, պիտի լինեն շատ և շատ։

«Ֆրանսահայ տուն»

Փարիզի հայ գաղութը լսելով մեր զեկուցումները կինոֆիլմի ցուցադրմանը, որին ներկա էր հազարավոր հասարակություն, համաձայնությամբ բարեգործականի, Տիկնաց միության և Փարիզի ՀՕԿ-ի՝ հետևյալ հայտարարությունն արավ.

1. Ֆրանսիայում ապրող հայ գաղութը առաջիկա մայիսի 1-ից կառուցանում է Երևանի մեջ մի տուն, այնքան սենյակից բաղկացած, որքան սենյակ որ նա կարող կլինի կառուցանել մինչև Մայիսի 1-ը հավաքած գումարներով։

2. Այդ տան ճակատին պիտի գրված լինի. «Ֆրանսահայ գաղութի տուն»։

3. Տան մեջ սենյակների վարձակալության նախապատվությունը պիտի տրվեն՝

ա. այն որբերին, որոնք ցանկանում են ընտանիք կազմել.

բ. այն գաղթականներին, որոնք գալիս են դրսից։

Նույն օրը բացվեց հանգանակություն։ Բարեգործականը, ինչպես մեզ հայտնեց նրա քարտուղարը, մտադիր է մի խոշոր գումարով մասնակցել։

Փարիզի այդ որոշմանը միացավ նաև Մարսելի գաղութը, կմիանա և Լիոնինը։

...Թե Փարիզ և թե Մարսել նկարին հետևում էին մի չտեսնված խանդավառությամբ. ամեն մի նկար առաջնորդում էին ծափահարությամբ, նույնիսկ ծափահարում էին այնտեղ, ուր հայերեն լեզվով գրված էր «Ա մաս»։

Գրությունները այստեղ փոխեցինք բոլորը միայն հայերեն լեզվով և հին ուղղագրությամբ։ Այդ աշխատանքը այստեղ կատարեցին 2 օրում...

Ափսոս, որ շատ հետաքրքրական <մի> նկար «Պետլուսկինոն» չգիտենք ինչու հանել է։ Համենայն դեպս այսպես անգամ բավարարություն է տալիս պաղուեին։

Եղանք Լիոնի և Մարսելի շրջանում գաղթականության բնակեցրած վայրերում։ Ամեն տեղ սրտառուչ դիմավորում։ Տեղ-տեղ մեզ տեսնելուց ուրախությունից լալիս են, որ գալիս ենք Հայաստանից։

Դրանց մասին կգրենք առանձին։ Համենայն դեպս այդ ժողովուրդը, հոգով-սրտով կապված է Հայաստանի հետ, ապրում է տաժանակիր աշխատանքով և ունի մի ձգտում—գալ Հայաստան։ Բոլորն էլ պարապում են բանվորությամբ։ Կարոտ են մխիթարության և մեր այցը նրանց վերստին կենդանություն է տալիս։

ՀՕԿ-ի արտասահմանի պատվիրակներ.

<Միքայելյան>

<1926>

3
ՀՕԿ-ի և Կ. Խաչի արտասահմանյան պատվիրակության զեկույցը

Մեկնումը

ՀՕԿ-ի և Կարմիր խաչի պատվիրակությունը, հանձինս Գր. Վարդանյանի, Կ. Միքայելյանի և բժ. Սպ. Կամսարականի, մեկնեց արտասահման Մոսկվայից, անցյալ, 1925 թ. նոյեմբերի 5-ին, Սեբեժի վրայով և վերադարձավ կըրկին Մոսկվա, Նեգորելոյի վրայով այս տարի, 1926 թ. դեկտեմբերի 1-ին, այսպիսով մնալով Խորհրդային Միության սահմաններից դուրս 13 ամիս։

Պտտած վայրերը

Պատվիրակությունը անցնելով Ռուսաստանից, եղավ Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Անգլիա և Ամերիկա՝ մինչև Կալիֆորնիա և 58* վայրում 121 անգամ հրապարակական բանախոսություն ունեցավ կամ կինոյի ցուցադրությամբ և կամ առանց, որին ներկա են գտնվել 46.650 մարդ։

Այդ վայրերը հետևյալներն են՝

1. Բեռլին—Գերմանիա
2. Փարիզ—Ֆրանսիա
3. Դերսի —»—
4. Մարսել —»—
5. Գարդան —»—
6. Վալանս —»—
7. Լիոն —»—
8. Սեն-Շամո և Սենթ-Էտիեն —»—
9. Որբեր —»—
10. Պոն-դը-Շերի —»—
11. Նիս —»—
12. Արնովիլ —»—
13. Արֆորվիլ —»—
14. Բրյուսել—Բելգիա
15. Անտվերպեն —»—
16. Լոնդոն—Անգլիա

* Հեղինակը սխալմամբ երկու անգամ է նշել Չիկագո քաղաքի անունը։

17. Մանչեստր —»—
18. Նյու-Յորք—Ամերիկա
19. Ֆիլադելֆիա —»—
20. Նյու-Ջրզի—Ամերիկա
21. Նյու-Արք —»—
22. Պրավիդենս —»—
23. Փութաքեթ —»—
24. Բրակտրն —»—
35. Նիագարա-Ֆոլս —»—
26. Լովիլ —»—
27. Լորենս —»—
28. Ուոտի —»—
29. Լին —»—
30. Հեյվրիլ —»—
31. Սպրինգֆիլդ —»—
32. Թրոյ —»—
33. Բինգհեպտրն —»—
34. Սիրակուզ —»—
35. Նիագարա-Ֆոլս —»—
36. Կլիվլենդ —»—
37. Դետրոյդ —»—
38. Ռեյսին —»—
39. Վոքեգրն —»—
40. Միլվո-Օկի —»—
41. Պոնտիակ —»—
42. Դիլարի —»—
43. Վայտենսվիլ —»—
44. Ջլսի —»—
45. Հարտֆրրթ —»—
46. Ջիկագո —»—
47. Ջիկագո —»—
48. Վեստ-Պուլման —»—
49. Գրանտ-Սիտի —»—
50. Լոս-Անջելես —»—
51. Ֆրեզնո —»—
52. Ֆաուլեր —»—
53. Սան-Ֆրաննիսկո —»—
54. Վաշինգտոն —»—
55. Ռիզմոնդ —»—
56. Պորտլանդ —»—
57. Ժրնև—Շվեյց. <արիա>
58. Մոսկվա—Ռուսաստան

Այս բոլոր քաղաքները պտտելու համար 13 ամսվա ընթացքում պատվիրակությունը կտրել է 53.281 կիլ<ոմետր> տարածություն՝ թե երկաթուղով և թե նավով, որ եթե հաշվելու լինենք, որ մի ժամում գնացել է 53 մղոն, կանի 1000 ժամ կամ 42 օր և գիշեր։

Բարոյական արդյունքը

Պատվիրակությունը իր շրջագայության ընթացքին, բոլոր գաղութներում, անխտիր կերպով, գրկաբաց ընդունելություն է գտել և խանդավառ ցույցերի առարկա գառել։

Խորհրդային իրավակարգի հակառակորդ տարրերը պատվիրակության հանդեպ պահել են քիչ թե շատ կոռեկտ վերաբերմունք և հրապարակական ժողովները խանգարելու փորձեր չեն արել։

Առանձնապես մեծ ոգևորությամբ <պատվիրակությանը> դիմավորել են գաղութների աշխատավոր տարրերն ու բանվորությունը։

Հրապարակական բոլոր ժողովներին պատվիրակությունը բանախոսել է Խ. Հայաստանի արդի կացության և նրա մեջ կատարվող շինարարական աշխատանքների մասին և ցուցադրել է «Խ. Հայաստան» ֆիլմը։

Կազմակերպչական արդյունքը

Ամեն տեղ, ուր եղել են ՀՕԿ-ի և Կարմիր խաչի մասնաճյուղեր, նա ուժեղացրել է դրանց, իսկ ուր չեն եղել՝ բացել է նորերն, այսպիսով ՀՕԿ-ը Ֆրանսիայի մեջ ունի 32 ճյուղ, Անգլիայում՝ 2 ճյուղ, Բելգիայում և Գերմանիայում՝ 1-ական և Ամերիկայում՝ 45 ճյուղ, ընդամենը 81 ճյուղ, իսկ Կարմիր խաչը միայն Ամերիկայում ունի 61 ճյուղ։

ՀՕԿ-երին անդամագրվում են ըստ մեծի մասին աշխատավորական տարրերն ու այսպիսով նա տեղական բանվորական զանգվածների մեջ ամենաժողովրդական կազմակերպությունն է դառնում։

Նյութական արդյունքը

Բացի բարոյական և կազմակերպչական արդյունքներից, պատվիրակության պտույտը տվեց հետևյալ նյութական արդյունքները.

1) Քեմպ-Օտտոյի գաղթականությունից ստացավ Հայաստանի վերաշինության համար 3341 ֆրանկ։

2) Պ. Տիգրան Ջամկերտյանից (Բրյուսել) ստացավ Նոր-Եվդոկիա գյուղի համար 20.000 ֆրանկ բելգիական (գոլ.)։

3) պ. Ա. Մաթոսյանից նույն գյուղի համար 7000 բելգ. ֆրանկ (65 ֆ. ստ.)։

4) պ. Դավիթ Մսրյանը խոստացավ գաղթականների համար մի տուն շինել 1000 ֆ. ստ. արժողությամբ, որից արդեն փոխադրել է Հայաստան 500 ֆ. ստ.։

5) Պալաքյան եպիսկոպոսի միջոցով ստացանք 2 մանրացույց համալսարանի համար, որ արդեն ուղարկված է։

6) Էնֆիեմյան գործարանից 5000 բելգիական ֆրանկ Կ. խաչի համար (գոլ.)։

7) Ռումինիայից 40.000 լեյ Կարմիր խաչի համար (գոլ.)։

8) պ. Ջատիկ Խանզադյանը պատրաստեց 80 հատ դիոպոզիտիվ՝ մոգական լապտերների համար ու դրեց պատվիրակության տրամադրության տակ։

9) Նույն Ջ. Խանզադյանը խոստացավ նվիրել Հայաստանի մեծագիր քաղաքական ու տնտեսական շքեղ ատլասը, որ այժմ նա պատրաստում է և կարժենա մոտ 150.000 ֆրանկ։

10) Նույն Ջ. Խանզադյանը մի գրությամբ, ուղղված պատվիրակությանը, հաղորդեց, որ համաձայն իր կտակի, իր մահվանից հետո Հայաստանին է նվիրում իր քարտեզների հազվագյուտ հավաքածուն և ամբողջ գրադարանը, որ գնահատվում է 3—4 միլիոն ֆրանկ։

11) Համաձայն Բարեգործականի հետ վարած բանակցության, վերջինս ՀՕԿ-ի տրամադրության տակ դրեց Դ. Հակոբյանի կտակի 400 ֆ. ստ. գումարը Արագածի լանջերին ապրող գյուղերից մեկի մեջ մի դպրոց շինելու համար, որի պահպանման համար հատկացնում է տարեկան 40—50 ֆ. ստ.։

12) Վերջնական համաձայնություն կայացրեց Մարկոսյան կտակակատարների հետ, ընկ. Ա. Երզնկյանի հետ կնքված պայմանագրի հիման վրա, Երևանի մեջ մի արհեստագիտական դպրոց կառուցանելու համար, 40—60.000 ռուբլու արժողությամբ, որի հետագա պահպանության համար խնամակալությունը կարող է հատկացնել տարեկան 800—1000 ֆ. ստ.։

13) պ. Պողոս Էմերյանը հանձն առավ (բերանացի կերպով) շինել Հայաստանի գյուղերից մեկի մեջ գաղթականների համար 2 տնակ, ամեն մեկը 40—50 ֆ. ստ. արժողությամբ։

14) Բանակցելով Խերյան կտակի կտակակատարների հետ, հաջողվեց ստանալ նրա մի մասը՝ 24.000 ռուբլի՝ Արագածի լանջերին, գյուղերից մեկում մի մեղվաբուծական դպրոց շինելու համար։

15) Բարեգործականը նոր գրությամբ ՀՕԿ-ի գլխ.<ավոր> վարչությանը հանձնեց Պողոս Նուբար փաշայի նվիրաբերած գումարների ռեալիզացիան Հայաստանի մեջ, սակայն վերջում ուղարկեց պ. Միհրդատյանին՝ Երևան, այդ գումարով շինելու մի ակնաբուժական կլինիկա, հատկացնելով այդ նպատակի համար 70.000 ռուբլի։

16) Պատվիրակության թելադրությամբ Ֆրանսիայի ՀՕԿ-ի գլխ.<ավոր> վարչ.<ությունը> ձեռնարկեց մի հանգանակություն, շինելու համար մի տուն՝ «Ֆրանսահայ» անունով, որի համար գանձվեց միայն 30.000 ֆրանկ։

17) Մի տուն ևս «Փարիզահայ» անունով, հանձն առավ շինել Փարիզի Տիկնաց Միությունը, որի համար հավաքված է մոտ 200.000 ֆրանկ։

18) Մի տուն ևս՝ անապաստան երեխաների համար, հանձն առավ շինել Անգլիայի հայ գաղութը «Անգլիահայ» անունով, որի համար արդեն գանձված էր 1500 ֆ. ստ.։

19) Դպրոցասեր Տիկնաց վարչությունը հանձն առավ Հայաստանի մեջ <շինել> մի քանի հատ դպրոցական շենք, որի համար հատկացրեց 20.000 դոլլար։

20) Բանակցություն վարեց Խրիմյան Հայրիկ անունով գոյություն ունե-

ցող ֆոնդի խնամակալության հետ և ստացավ մի գրություն, համաձայն որի խնամակալությունը իր տրամադրության տակ եղած 10.000 դոլլարով շինում է մի դպրոցական շենք՝ Հայաստանի մեջ։

21) Պատվիրակության թելադրությամբ հայ կրթական հիմնարկությունը Ն.-Յորքում, որի գրամագլուխն է 200.000 դոլլար, խոստացավ իր միջոցներով հրատարակել հայ ժողովրդական երգերի մի ժողովածու և պահել մի շարք ուսանողներ արտասահմանի համալսարաններում, որը կուղարկի Հայաստանի լուսժողկոմատը։

22) Պատվիրակության այցելության առիթով Ամերիկայում կազմվեց մի հանգանակիչ մարմին, որի նախագահությամբ Հայաստանի մեջ, գաղթականների համար պիտի կառուցվի մի տուն «Ամերիկահայ» անունով։ Արձանագրված էր արդեն մոտ 30.000 դոլլար։

23) Ներկա գտնվեց Մալաթիայի Հայրենակցական Միության պատգամավորական ժողովին, ուր վճռվում էր նրա 130.000 դոլլար կարողության՝ Հայաստանի մեջ գործադրելու խնդիրը։ Պատվիրակության հավանությունը ստանալով, պատգ.<համավորական> ժողովը ընդունեց Հայաստանում մի կոշկակարական գործարան և մի քանի հատ փոքրիկ տներ շինելու առաջարկը, որի համար հատկացրեց 30.000 դոլլար։

24) Ֆրեզնոյում (Կալիֆ.<որնիա>) կարնեցի Հակոբ Նշիկյանը բարեգ<ործականի> մոտ ունեցած իր 1000 դոլլարը %%-ով փոխանցեց ՀՕԿ-ին, որպեսզի վերջինս այդ գումարով Արագածի լանջի վրա գտնվող սատունցիների գյուղերից մեկում, ՀՕԿ-ի հսկողության տակ, մի դպրոց կառուցի։

25) Լենինականի երկրաշարժի առիթով բոլոր գաղութներին հեռագրական կոչ ուղարկեց համագաղութային հանգանակություններ կատարելու և Փարիզի մեջ իր նախագահությամբ և հովանավորությամբ կազմակերպեց մի կենտրոնական հանգանակիչ հանձնախումբ և անձնական մասնակցությամբ աջակցեց հանգանակությանը, որից գոյացավ մոտ 100.000 ռուբլի։

Ստացված տեղեկությունների համաձայն, Լենինականի համար եղած հանգանակությունը Ամերիկայում կարող է տալ 200.000 ռուբլի, Անգլիայում՝ 8000 ռուբլի։

26) Երկրորդ անգամ պատվիրակներից մեկը Անգլիա գնալով, ստացավ Կ<արմիր> խաչի համար 75 կիլո խինին, 4 հակ հագուստեղեն և 150 ֆ. ստ. դրամ։

Հասարակական գումարների ուսումնասիրություն

Պատվիրակությունը իր աշխատանքներին զուգահեռական կարգով մանրակրկիտ կերպով ուսումնասիրեց արտասահմանի մեջ գտնվող բոլոր կտակների, նվիրատվությունների և հասարակական գումարների պատմությունը և հավաքեց նրանց նկատմամբ նյութեր, որ կարգի բերելուց հետո, համաձայն Ֆրանսիայի շրջանի պատգամավորական ժողովի որոշման, առանձին գրքույկով պիտի հրատարակության տրվի։

Հանգանակություն և արժեթղթերի վաճառք

Առհասարակ պատվիրակությունը եկավ այն եզրակացության, որ իր ներկայության ժամանակ տեղի ունեցած հանգանակությունը վերջինը պիտի լինի Հայաստանի համար և, նրա անունով, և որ այսուհետ երկիրը կապիտալ մուտքընելու միակ ձևը պիտի համարել արդյունաբերական ձեռնարկների սատարումն և կամ նրանց՝ Հայաստանի մեջ գոյություն ունեցող արժեթղթերի վաճառքը, ինչպես օրինակ «Շինարար» ընկերության և գյուղատնտեսական բանկի։

Այդ իսկ նպատակով պատվիրակությունը ֆինանսական կարևոր շրջաններում սարքեց խորհրդակցություններ, հող պատրաստելու համար Հայաստանի մեջ նման արդյունաբերական և շինարարական ձեռնարկություններ սկսե-

լու և կամ Հայաստանի արդեն գոյություն ունեցող ձեռնարկների արժեթղթերը երկրից դուրս վաճառելու համար։

Ակցիոներական ընկերություններ և Նանսենի ծրագիրը

Պատվիրակությունը Ամերիկա եղած ժամանակ փորձեց մի ընկերություն հիմնել առևտրական հիմունքների վրա, բնակարանային շինարարության համար «Ամերիկա-Հայկական շինարարական ընկերություն» անունով, մեկ միլիոն դոլլար հիմնական դրամագլխով։ Այդ իմաստով մշակել տվեց մի պրոեկտ։ Սակայն Նյու-Յորքի մեջ խոշոր կապիտալիստների հետ կազմված մի խորհրդակցության մեջ այդ առաջարկը ընդունվեց այն վերապահությամբ, որ իրենք կտան իրենց աջակցությունը, սակայն նախաձեռնարկը վերցնելուց կհրաժարվեն։

Այդ ծրագիրը, Փարիզ գալով, պատվիրակությունը առաջարկեց Պողոս Նուբար փաշային։ Վերջինս միանգամայն հավանություն տալով այդ առաջարկին, ընդունեց, միայն այն փոփոխությամբ, որ այդ «Ամերիկա-Հայկական ընկերությունը» հիմնվի ոչ թե բնակարանային շինարարության, այլ անջրդի դաշտերի ոռոգման համար, իբրև իրագործություն՝ Նանսենի Ազգերի Լիգային առաջարկած ծրագրի մի որոշ մասի։

Իբրև հիմնադրամ այդ ընկերության համար պիտի ծառայի այն հանգանակությունը, որ որոշել է կատարել Ամերիկայի բարեգործականը՝ Պողոս Նուբարի անվան։ Այդ գումարը պիտի լինի 250.000 դոլ.<լար>։ Հանգանակության հաջող ելքի դեպքում Պողոս Նուբար փաշան որոշեց ավելացնել իր սեփական միջոցներից 100.000 դոլ.<լար> և իր ազգականների շրջանակում հավաքեց ևս 50.000 դոլ.<լար>։ Այսպիսով, ենթադրվում է ունենալ 400.000 դոլ.<լար> այդ ընկերության համար։

Որպեսզի ծրագրի իրականացումը արագանա, 250.000 դոլլար պիտի գանձվի ոչ թե հանգանակության ձևով, այլ ակցիաների վաճառքով։

Այս բանակցությունները վարելու համար պատվիրակությունը նախօրոք ստացավ խորհ.<րդային> Միության Նյու-Յորքի առևտրական ներկայացուցչի և Փարիզի դեսպան ընկեր Ռակովսկու հավանությունը։

Հայրենակցական միություններ

Պատվիրակությունը առանձին ուշադիր վերաբերմունք ցույց տվեց հայրենակցական միություններին։ Միայն Ամերիկայի մեջ գոյություն ունի 100-ի չափ հայրենակցական միություններ, որոնք իրենց գանձարկղներում ունեն այս և այն գումարները, ընդհանուր առմամբ մի քանի հարյուր հազար դոլլար։ Հայրենակցական միությունների շուրջը համախմբվելու շարժումը շատ ուժեղ է։ Վերջերս նրանց մեջ ստեղծվել է հայաստանյան հոսանք, որի հետևանքով ամեն մի միություն իր տրամադրության տակ եղած գումարը ուզում է գործադրել խոր.<հրդային> Հայաստանի մեջ, այս կամ այն ձևով հավերժացնելու միության սկզբնապատճառ քաղաքի և գյուղի անունը։

Պատվիրակությունն աշխատեց խորացնելու այդ շարժումը, որ կարող է Հայաստանի շինարարության ազդակներից մեկը լինել գաղութահայության մեջ։

Արդյունաբերության ուսումնասիրություն

Ճանապարհորդության ժամանակ պատվիրակությունը աշխատեց ծանոթանալ նաև այցելած երկրների տեխնիկական նվաճումների հետ և մասնավորապես առանձին ուշադրությամբ հետաքրքրվեց Ամերիկայի արդյունաբերության զարգացմամբ։

Այդ նպատակով նա այցելեց բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաներ, ծանոթացավ նրանց արտադրության միջոցների և կազմակերպության հետ ու

հավաքեց բավականին նյութեր։ Մեծ ուշադրություն դարձրեց նաև բնակարանային շինարարության վրա և այցելելով զանազան ցուցահանդեսներ ու նորակառույց բնակարաններ, հետը բերավ բազմաթիվ հրատարակություններ, շինարարական նյութերի կատալոգներ. նույն վերաբերմունքն ունեցավ նաև հիվանդանոցային գործի նկատմամբ։

...Այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը սկսեց ընդունել գաղթականական խմբեր Հունաստանից և Սիրիայից, բավականին բարեհաջող հող ստեղծեց պատվիրակության միսիայի համար։

<Կարեն Միքայելյան>

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ք. Ե. Կարիկյան, Պ. Էսմերյան, Ա. Համբարձումյան—փարիզաբնակ հայ մշակութային գործիչներ։

2. Խոսքը տնտեսագետ, Սովետական Միության Փարիզի դեսպանության բարտուղար, Անդրկովկասյան Ֆեդերացիայի Փարիզի ներկայացուցիչ Սիմոն Փիրումյանի մասին է։

3. Նկատի ունի գրող և հրապարակախոս Լևոն Բաշալյանին (1868—1943)։

4. Էդգար Շահեն (1874—1947)—փարիզաբնակ նկարիչ, հայ արվեստագետների «Անի» խմբակցության նախագահ։

5. Նկատի ունի փարիզաբնակ նկարիչ Հովսեփ Փուշմանին (1877—1966)։